ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

ք. Երևան «20» հոկտեմբեր 2026 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 30-Ա

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 12-րդ կետով և հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 9-ի N 440-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները՝ հայտատուի կողմից ներկայացված հայտը և դրան կից ներկայացված փաստաթղթերը Հավելվածի սահմանված չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար հետևյալ հայտատուի կողմից ներկայացված հայտը՝

1) հայտատու ֆիզիկական անձ Տաթևիկ Մարտինի Ասատրյանի հայտը՝ այն հիմնավորմամբ, որ հայտատու ֆիզիկական անձ Տաթևիկ Մարտինի Ասատրյանի կողմից չեն ներկայացվել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար անհրաժեշտ հիմքեր և հիմնավորումներ, մասնավորապես՝ ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 6-րդ կետի

2-րդ ենթակետով սահմանված՝ վերջին հինգ տարվա ընթացքում կառավարությանը ենթակա մարմնի՝ օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում առնվազն երեք տարվա մասնագիտական փորձառություն ունենալու, ինչպես նաև այդ ժամանակահատվածում նշված ոլորտներում իրականացված առնվազն երկու ծրագրի մասնակցության վերաբերյալ: Միաժամանակ ներկայացված հայտով և կից փաստաթղթերով չի հիմնավորվում նաև Հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության որևէ համայնքում հաշվառված լինելու, տվյալ համայնքում կամ մարզում կառավարությանը ենթակա մարմնի՝ օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում գործունեություն ծավալելու և տվյալ ոլորտում առնվազն երկու տարվա մասնագիտական փորձառություն ունենալու պահանջներին համապատասխանությունը:

7/20/2026

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393